# ԱԲԵԼ ԱՂԱՆԲԵԿՅԱՆ. ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՄՈՍԿՈՎՅԱՆ ՊԱՇՏՊԱՆԸ...

Օրերս Հայաստանում էր գտնվում Ռուսաստանի Դաշնության կառավարությանն առընթեր ժողովրդական տնտեսության ակադեմիայի ռեկտոր, ակադեմիկոս Աբել Աղանբեկյանը: Նա հյուրընկալվել էր իր ընկերոջ՝ Զորի Բալայանի հարկի տակ, որի կազմած ճամփորդական ծրագիրը հնարավորություն տվեց նրան մի քանի օրվա ընթացքում տեսնել այնքան բան, որքան հնարավոր չէր որեւէ պաշտոնական այցի ընթացքում: Մեր հանրապետությունում գտնվելու ընթացքում եւ Մոսկվա վերադառնալուց առաջ հանրահռչակ տնտեսագետը հարցազրույցներ տվեց «Երրորդ Հանրապետություն» թերթի արտահաստիքային աշխատակից Լեւոն Կանցյանին: Առաջին զրույցը, որ վերտառված է «Աբել Աղանբեկյանն ինչպես որ կա...» տպագրված է մեր թերթի նախորդ համարում: Ձեզ ենք ներկայացնում երկրորդ զրույցը:



## 2. ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԲԱՆԱԼԻՆ...

*- Պարոն Աղանբեկյան, հայտնի է, որ նախկին Միութենական տնտեսական հանձնաժողովը, որի պատասխանատուն Դուք էիք, Հայաստանի նախկին Պետպլանի, ապա էկոնոմիկայի նախարարության հետ մշակեց մեր հանրապետության տնտեսական զարգացման ծավալուն ծրագիր: Ինչպե՞ս ավարտվեց Ձեր առաքելությունը:*

Մենք պարբերաբար քննարկում էինք Հայաստանին վերաբերվող բազմաբնույթ հարցեր, մեծ տեղ հատկացնելով էներգետիկայի խնդիրներին: Հրավիրվեց հատուկ կոնֆերանս մոսկովյան կազմակերպությունների մասնակցությամբ, ներկայացվեցին բազմաթիվ վերլուծություններ: Մասնավորապես արժեքավոր էին ակադեմիկոս Նիկոլայ Ենիկոլոպովի առաջարկները (Նիկոլայ Ենիկոլոպյանը ղարաբաղցի է Մարտակերտի շրջանից): Ընթացիկ հանդիպումներ էինք կազմակերպում նաեւ ղարաբաղյան հարցի շուրջ, սակայն ԽՍՀՄ փլուզումից հետո կապերն սկսեցին թուլանալ: Մեր հանձնաժողովը ընդամենը խորհրդատուի դերում էր եւ ոչ կարգադրողի: Այդ հանգամանքը ճիշտ չընկալվեց Հայաստանի առանձին ղեկավարների կողմից, եւ հանձնաժողովը դադարեց գործելուց, պարզապես ինքնաբերաբար լուծարվեց:

*- Իսկ ի՞նչ է արվում Ձեր ղեկավարած ակադեմիայում Հայաստանի համար:*

Մեր ակադեմիայում Հայաստանի արտադրության, տնտեսության ղեկավարների եւ երիտասարդների ուսուցման ծավալուն աշխատանքներ ենք կատարում: Հարյուրավոր շրջանավարտներ ունենք, որ այս օրերին Հայաստանում եւ Ղարաբաղում հանդիպեցին ինձ, որոնց ընթացքում պայմանավորվածություն ձեռք բերվեց համագործակցության հետագա զարգացման մասին: Գտնում եմ, որ մենք այստեղ խմբեր կկազմակերպենք, որոնց գործնական եւ տեսական օգնություն ցույց կտան մեր ակադեմիայի առաջատար մասնագետները խորհրդատվությունների, դասախոսությունների եւ հարցերի համատեղ լուծման միջոցով: Պայմանավորվածություն է ձեռք բերվել Երեւանի մայր բուհում պետական համալսարանում դասախոսությունների շարք անցկացնելու վերաբերյալ:

*-Ձեր այս մասնավոր այցի ընթացքում ի՞նչ տպավորություններ ստացաք Հայաստանից եւ Ղարաբաղից:*

Իմ հյուրընկալողի՝ գրող-հրապարակախոս Զորի Բալայանի հետ այցելեցինք բազմաթիվ բնակավայրեր, հանրահայտ եկեղեցիներ ու տաճարներ, ջերմ հանդիպումներ ունեցանք աշխատավոր մարդկանց, ինչու չէ նաեւ գործարարների հետ: Ծանոթացա բանակի իրավիճակին, որի կարգապահությունը, ճիշտն ասած, մեծ տպավորություն գործեց: Եղանք նաեւ հոսպիտալներում: Հանդիպումներ ունեցանք հանրապետության ղեկավարների հետ:

*-Հարգարժան ակադեմիկոս, իսկ Արցա՞խը...*

Լավ հիշեցրիք: Ես շատ բան իմացա Արցախի տնտեսական վերածննդի մասին: Զարմանալի է, որ պատերազմից տակավին մի երկու տարի հետո Ստեփանակերտում լիովին վերականգնվել են կենսական ապահովման անհրաժեշտ կոմունիկացիաները հենց տները, միջոցներ են ձեռք առնված պատմական հուշարձանների վերականգնման ուղղությամբ: Սպասվում է, որ քրիստոնեության ընդունման 1700-ամյակի տարելիցին վերականգնման աշխատանքները կավարտվեն: Ինձ հիացմունք պատճառեց ղարաբաղցիների անսահման սերն ու նվիրվածությունը սեփական օջախի, հողի ու երկրի նկատմամբ: Այդպիսի ժողովուրդն անպարտ է: Պատերազմի հետեւանքներն ամենուրեք զգացվում են. մարդիկ դեռ աղքատ են, ցածր է արտադրողականությունը, անկատար է գյուղատնտեսական մթերքների մշակման տեխնոլոգիան: Գերակշռում են տնտեսությունը վարելու իրենց դարն ապրած ձեւերը, սակայն կա մեծ ձգտում, հաստատակամություն եւ աշխատասիրություն, որոնք այս դեպքում առաջնային գործոններ են: Ավելացնեմ, որ մարկետինգային գործունեության բացակայության հետեւանքով ղարաբաղյան լիարժեք պահանջարկ վայելող բավականաչափ բարձրորակ գինին, մի շարք արժեքավոր մթերքներ (թթի օղի, ընկույզ), որ նախկինում այլ երկրներ էին արտահանվում, չգիտես ինչու, շուկա դուրս չեն գալիս: Այս կապակցությամբ առայժմ բանավոր խորհրդատվություններ եմ արել: Համատեղ գործունեության ծրագիր կկազմենք: Դա շատ կարեւոր է: Արցախում նկատեցի Իրանի հետ առեւտրական հարաբերություններ: Վատ չէ: Սակայն դեռ չօգտագործված հնարավորություններ կան, որոնք պետք է շարժման մեջ դնել, օգտվել դրանց բարիքներից եւ... ամեն ինչ արագ կփոխվի:

*-Աբել Գյոզեւիչ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական համալսարանը Ձեզ արժանացրել է պատվավոր դոկտորի կոչման: Շնորհավորում եմ:*

Շնորհակալ եմ: Ես աշխարհի շատ երկրների համալսարանների պատվավոր դոկտոր եւ անդամ եմ, բայց ինձ համար այս կոչումը ամենաթանկն է, որն ինձ պարտավորեցնում է: Մտադիր եմ այս տարվա վերջերին կրկին այցելել Հայաստան եւ Արցախ, հանդես կգամ կոնկրետ տնտեսագիտական առաջարկություններով, խորհրդատվություններով եւ, իհարկե, դասախոսություններով: Մեր ակադեմիան մտադիր է համակարգիչներով լիովին համալրել Արցախի համալսարանը: Այս ճամփորդությունն ինձ ապացուցեց, որ Ղարաբաղը ճիշտ ճանապարհին է: Երբ Երեւանում այցելեցի ցեղասպանության զոհերի թանգարան, լիովին համոզվեցի, որ պատմական ողբերգության կրկնություն երբեք չպետք է թույլ տալ: Այդ վեհ, հայրենասիրական գաղափարով է տոգորված յուրաքանչյուր ղարաբաղցի մեծից փոքր: Դա ողջունելի է: Հիացմունք է պատճառում:

*- Պարոն Աղանբեկյան, մի երկու խոսք էլ Հայաստանի մասին:*

Ինչ վերաբերում է Հայաստանի զարգացմանը, ապա ես հանդես եմ եկել մի շարք նախաձեռնություններով մասնավորապես առեւտրային բանկերին վերաբերող: Հանրապետության նախագահի, վարչապետի, մի շարք ձեռնարկությունների տնօրենների հետ նրանց առանձին խորհուրդներ ներկայացրի, այսպես ասած, մանր բիզնեսի, բնակարանային շինարարության զարգացման, ֆինանսական աղբյուրներ հայթայթելու վերաբերյալ: Վերադարձից հետո մտադիր եմ հրավիրել հայազգի մասնագետներին, որոնցից շատերը բանկերի նախագահներ են, նույնիսկ ղեկավար դեր են զբաղեցնում բանկային համագործակցությունում: Մասնագետների խորհրդակցությունը կջանա նորովի լուծումներ գտնել Հայաստանի համար: Պայմանավորվածության համաձայն Հայաստանի Հանրապետության ղեկավարությանը անմիջականորեն տեղյակ կպահիմ այդ քննարկումների արդյունքների մասին: Ուզում եմ մի ավելորդ անգամ ընդգծել, որ մեր ակադեմիան մեծ կապեր ունի Ռուսաստանի Դաշնությունում եւ Հայաստանում: Այստեղ առաջին հերթին աշխատում ենք Արդյունաբերողների եւ գործարարների միության հետ, որն անդամակցում է Տնօրենների ակումբին Մոսկվայում: Իմ այս այցի ժամանակ անդամակցելու ցանկություն հայտնեցին եւս մի շարք ձեռնարկությունների տնօրեններ Երեւանից, Գյումրիից, Սյունիքից, Աբովյանից: Մեր կապերը սերտ են նաեւ Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի հետ:

Մի խոսքով, ես պատրաստ եմ իմ գիտելիքներն ու ջանքերը ծառայեցնել հանուն այս հողի վրա կեցության բարելավման: Հենց սա է խնդրի լուծման բանալին:

*- Շնորհակալություն: Մինչ նոր հանդիպում:*

Խնդրեմ:

*Լեւոն ԿԱՆՑՅԱՆ*